ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 8

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2019թ. մարտի 29-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ամբիոններում:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ Լ.Ա.Այդինյան, Ն.Ռ.Սիմոնյան, Ա.Ռ.Բեգլարյան, Օ.Ա.Քամալյան, Կ.Ժ.Մինասյան, Ս.Է.Հակոբյան:

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Ա.Այդինյանին, որը ներկայացրեց ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները վերոհիշյալ ամբիոնում

(ամբիոնների վարիչների զեկուցումները կցվում են):

Նա նշեց, որ բոլոր տեխնոլոգիական մասնագիտությունների ավարտին ատեստավորումը իրականացվում է դիպլոմային նախագծերի պաշտպանությամբ, իսկ գյուղ. հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում մասնագիտությունների – դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ:

Նշվեց, որ ամբիոնում մեծ ուշադրություն են դարձնում ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաների և լաբորատոր պարապմունքների ամցկացմանը:

«Սննդի արդյունաբերության սարքավորքումների» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր Ա.Բեգլարյանը շեշտադրեց արտադրական պրակտիկաների ավելի նպատակային օգտագործումը, այսինքն ուսանողները գնան պրակտիկային այն գործարանները, որտեղ կարող են ձեռքբերել պրակտիկ հմտություններ:

«Ընդհանուր քիմիայի» ամբիոնի վարիչ քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օ.Քամալյանը նշեց, որ ամբիոնում առկա ուսումնական լաբորատորիաների տեխնիկական վիճակը և հատկապես խիստ անբավարար է դրանց հագեցվածությունը նոր սարքավորումներով:

«Ֆիզիկական կուլտուրայի» ամբիոնի վարիչ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ս.Հակոբյանը առաջարկեց, հնարավորության դեպքում ֆիզիկական կուլտուրայի դասերը անցկացնել շաբաթական երկու անգամ, քանի որ դասաժամերի տևողությունը կրճատվել է՝ շաբաթական մեկ պարապմունքը (50 րոպ.) շատ քիչ է ուսանողի ֆիզիկական որակները զարգացնելու համար:

«Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկանածու, դոցենտ Ն.Սիմոնյանը նշեց, որ ամբիոնում 3 մասնագիտական լաբորատորիաները վերանորոգման կարիք ունեն: Կազմվում են գրաֆիկներ լաբորատոր-գործնական պարապմունքները արտադրությունում և «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունում անցկացնելու համար:

«Ֆիզիկայի և ջերմատեխնիկայի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ.Մինասյանը արձանագրեց, որ գործնական ու լաբորատոր պարապմունքների կազմակերպումը մասամբ է բավարարում ժամանակակից ձևաչափին: Լաբորատոր աշխատանքների իրականացման համար նախատեսված սարքավորումները գործող վիճակում են, սակայն բարոյապես հնացած:

Ամբիոնների վարիչների ելույթները ամփոփեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ.Մինասյանը /ելույթը կցվում է/:

Արտահայտվեցին՝ Ռ.Մակարյանը, Հովեյան Զարուհին (Ազրո.-5 կուրս) բարձրացրեց ուսումնական լաբորա-տորիաների վերանորոգման և վերազինման հարցը: Ռեկտոր Վ.Ուռուտյանը տեղեկացրեց, որ ուսումնական մասի հետ պետք է գույքագրեն բոլոր ուսումնական լաբորատորիաները և հավանաբար ստեղծեն մեկ-երկու կենտրոնացված լաբորատորիա լիարժեք հագեցված ժամանակակից

սարքավորումներով: Նշվեց նաև, որ արտադրական պրակտիկայի ժամանակ ուսանողը պետք է ակտիվորեն մասնակցի կատարվող գործընթացներին այլ ոչ թե լինի դիտորդի դերում: Հարց բարձրացվեց դիզայնի և փաթեթավորման մասնագիտության վերաբերյալ:

Պարոն Օ.Քամալյանը առաջարկեց հայցորդության համար պահանջվող վարձավճարի անհիմն բարձր չափերը հնարավորության դեպքում զեղչել: Ռեկտորը համաձայնեց քննարկելու բարձրացված հարցը երիտասարդներին խրախուսելու նպատակով:

Ինչ վերաբերվում է մարզադահլիճների և մարզագույքին նշվեց, որ դրանք շատ վատ վիճակում են: Առաջարկվեց մարզադահլիճները կոչել այն բարերարների անուններով, որոնք կնպաստեն դրանց վերանորոգմանը և բարելավմանը: Որպեսզի դահլիճները լինեն բարձր մակարդակի և մարզագույքը նոր անհրաժեշտ է իրականացնել թիմային աշխատանք:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

Լսեցին՝ Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու հայտերի վերաբերյալ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրենի տեղակալ Ա.Սահակյանի «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Գ.Սամվելյանի, «Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Գ.Գասպարյանի հաղորդումները:

Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտի դաշտավարության մեքենայացման բաժնի վարիչ Ա.Ալթունյանի, Անասնապահության և կերարտադրության մեքենայացման բաժնի վարիչ Ս.Մարգարյանի և Ավտոմոբիլային փոխադրումների բաժնի վարիչ Ս.Մոսիկյանի հաղորդումները:

Սննդագիտության և կենսատեխնոլոգիայի ԳՀ ինստիտուտի Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի բաժնի վարիչ Ռ.Բեգլարյանի, Բուսական ծագման հումքի և մթերքի վերամշակման

տեխնոլոգիայի բաժնի վարիչ Ն.Յավրույանի և Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժնի վարիչ Ա.Փեփոյանի հաղորդումները:

«Պեստիցիդների և բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Ա.Ենգոյանի, «Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Մ.Գալստյանի, «Գյուղատնտեսության կենդանիների, սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Յու.Մարմարյանի և «Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Հ.Նաղաշյանի հաղորդումները:

«Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Ա.Մելիքյանի, «Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի» վարիչ Զ.Հարությունյանի և «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Ա.Ոսկանյանի հաղորդումները:

Որոշեցին՝ Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու համար վերը ներկայացված բոլոր հայտերը երաշխավորել:

Լսեցին՝ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանը ներկայացրեց գիտական խորհրդի հաստատմանը ռեկտորատի նիստում (արձ. N 7 04.03.2019թ.) հավանության արժանացած առաջարկությունը բոլոր մասնագիտությունների գծով ուսման վարձավճարները բարձրացնել 10%-ով:

Որոշեցին՝ Հավանություն տալ ռեկտորատի կողմից ներկայացված առաջարկությանը և ս/թ սեպտեմբերի 1-ից ուսման վարձավճարները բոլոր մասնագիտությունների գծով բարձրացնել 10%-ով:

Անդրադառնալով ուսումնական գործընթացի հետ կապված մտահոգությանը, ռեկտոր Վ.Ուռուտյանը նշեց գրախոսումների և դիպլոմային աշխատանքների որակի բարձրացման անհրաժեշտության մասին:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Ռ.Մակարյանի հաղորդումը ՀԱԱՀ-ի ֆակուլտետների գերազանց առաջադիմություն ունեցող

ուսանողներին 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակ հատկացնելու վերաբերյալ:

Որոշեցին՝ 2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակ հատկացնել ՀԱԱՀ-ի ֆակուլտետների հետևյալ ուսանողներին՝

Ագրոնոմիական ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| Ղարախանյան Կարեն Արթուրի | ԱԷ - 4 | Ակադեմիկոս Գ.Խ.Աղաջանյանի |
| Պետրոսյան Աննա Արտաշի | ՊԳՏ - 3 | Ակադեմիկոս Ա.Գ.Թումանյանի |

Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| Նազարյան Ռիմա Ավետիքի | ՖԿ - 4 | Անտոն Քոչինյանի անվան |
| Ավետիսյան Ռիմա Հրաչիկի | ՀՀ և Ա - 4 | Անդրանիկ Մարգարյանի անվ. |
| Երեմյան Կատերինա Արմենի | ԱԳ - 4 | Բ.Մարտիրոսյան անվան |
| Առաքելյան Լուսինե Ավետիսի | ԱՇ - 4 | ՀԱԱՀ գիտ. խորհրդի անվան |

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| Ամիրջանյան Անի Հայկազի | ՊՓ - 4 | Զ.Խ.Դիլանյանի անվան |
| Արզումանյան Հրանտ Բարիկի | ԳՏ - 4 | Վ.Ե.Թաիրովի անվան |

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| Խուրշուդյան Քրիստինե Համլետի | ՀՇ - 4 | Իվան Վասիլի Եղիազարովի անվ. |
| Ղազարյան Արտակ Արմենի | ՀՇ - 4 | Աղասի Ղևոնդի Խանջյանի անվ. |
| Ավետիսյան Տիգրան Լևոնի | ԷԼ - 4 | Ակադեմ.Ա.Մաթևոսյանի անվ. |
| Էլբակյան Վոլոդյա Լեոնիկի | ՃԵԿ- 4 | Պրոֆ. Ս.Սահակյանի անվ. |
| Գրիգորյան Արման Ռազմիկի | ԳՄՍ-3 | Պրոֆ. Հ.Մաքսապետյանի անվ. |

Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| Թումասյան Աննա Պետրոսի | ԱՍՓ - 3 | Ակադեմ. Ա.Զ.Թամամշևի անվ. |
| Ամիրջանյան Նունե Արայի | ԱՍՓ - 5 | Ակադեմ. Ա.Ա.Ռուխկյանի անվ. |

Լսեցին՝ Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արման Սամվելի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արման Սամվելի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման «Բնական թաղանթով նրբերշիկների տեխնոլոգիայի կատարելագործումը և ռիսկերի կառավարումը HACCP համակարգի միջոցով» վերնագրով, Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար նշանակել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արմենի Աղաբաբյանին:

Լսեցին՝ Ընդհանուր երկրագործության ամբիոնի հայցորդ, Արցախի Հանրապետության Շուշիի տեխնոլոգիական համալսարան հիմնադրամի Գյուղատնտեսական ֆակուլտետի ավագ դասախոս Նարինե Վլադիմիրի Ֆարսիյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրում վերախմբավորում կատարելու հարցի մասին:

Որոշեցին՝ Ընդհանուր երկրագործության ամբիոնի հայցորդ ավագ դասախոս Նարինե Վլադիմիրի Ֆարսիյանի «Արցախի Հանրապետությունում Ասկերանի շրջանի մշակովի հողերի ագրոքիմիական հատկությունների և սննդային ռեժիմի բարելավումը պարարտանյութերի և մելիորանտների կիրառմամբ կարտոֆիլի և աշնանացան ցորենի փորձերի օրինակով» թեկնածուական ատենախոսության թեման վերախմբավորել և հաստատել հետևյալ ձևակերպմամբ «Արցախի Հանրապետության անտառային դարչնագույն հողերի ագրոֆիզիկական և ագրոքիմիական հատկությունների բարելավումը պարարտանյութերի և մելիորանտների կիրառմամբ», Զ.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար՝ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Կ.Երիցյանին:

Լսեցին՝ Գիտության գծով պրոռեկտոր Հ.Ծպնեցյանին, որը ներկայացրեց տեխնիկական գիտությունների թեկնածու Գ.Ա.Սամվելյանին Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության

տեխնոլոգիա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունների ղեկավարելու թույլտվության հարցը:

Որոշեցին՝ Թույլատրել տեխնիկական գիտությունների թեկնածու Գ.Ա.Սամվելյանին ղեկավարել թեկնածուական ատենախոսությունները Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

Լսեցին՝ Ռոզա Յուրիի Ավագյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Ռոզա Յուրիի Ավագյանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Լսեցին՝ Նարինե Վլադիմիրի Ֆարսիյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Նարինե Վլադիմիրի Ֆարսիյանի Զ.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ, «Արցախի հանրապետության անտառային դարչնագույն հողերի ագրոֆիզիկական և ագրոքիմիական հատկությունների բարելավումը պարարտանյութերի և մելիորանտների կիրառմամբ» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան